

ՆՈՐ-ԲԱՅԱԶԱՁԵՏԻ ԳԱԻԱՐ

Ե. ԱՌԱՋԵԱՆ

(Ըմբող աշխառութիւնը 600 երեսից բաղկացած նույրուում է Մեծ. ա.
Սդէքսանդր Մելիք-Ըգարեանին)

Հ Ա Խ Ա Ց Ք **)

ԼԵՇՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Գեղարքունիքի գրեթէ ըուր նշանաւոր լեռների վրայ կան
ուխտատեղիներ, որոնցից միքանիսը պաշտուում են անխոտիր ամ-
բողջ ազգարնակութիւնից: Այսպիսի ուխտատեղիներից ամենաա-
նշանաւորը Արդըլլասար կամ Ազմաղան լերան (9332') գագաթին
գտնուած փոքրիկ մատուռն է, ուր քրիստոնէական ոչ մի նշոյլ
չկայ, ոչ էլ մի այլ կրօնի վերաբերեալ մի որ և է նշան: Ետառ ու
շատ հաւանական է, որ հարգվեային այս լեառը իւր ձագառաձն
բերնի փոքրիկ լճակով երկար գարերի ընթացքում պաշտուելով՝
նույրական է մնացել և այժմեան ազգարնակութեան: Գլխաւորա-
պէս վարդավառին և ընդհանրապէս տօն օրերին թէ հայ, թէ թուրք
և թէ քուրդ խաշնարածներ իրենց խաշներով բարձրանում են
այս լերան գագաթը, լողանում և լողացնում իրենց անասուննե-
րին այս լճակի մէջ, մատաղներ մորթում և աղօթում մի փոք-
րիկ մատրան մէջ, որ վերջին գարիս մի հասարակ շէնք է, կա-
ռուցուած իրը Արդըլլան անուն մի տաճկի գերեզմանի վրայ, որի
մասին թուրքերը պատմում են, թէ քրիստոնէաներից նահատա-
կուած մի բարեպաշտ մահմեղական է եղել, իսկ հայերը ասում
են, թէ մի թուրք տղայ է եղել, որ հայ խաշնարածների յորդոր-
մամբ կամեցել է քրիստոնէութիւն ընդունել և քահանայ չգտնե-
լով այդ խաշնարածներից մէրտուել է լերան գագաթի լճակում:
Բայց երբ ծնողները իմացել են, խփել սպանել են նրան նոյն լե-
րան գագաթին, ուր այժմ իրը թաղուած է:

Զ Բ Ի Պ Ա Շ Տ Ա Մ Ո Ւ Ն Ք

Նախկին ջրապաշտութեան հետքերից այս գաւառում նկա-
տելի են հետեւեալները: —

*) Իմ խնդրով նիւթեր հաւաքել են նաև պ. պ. Վ. և Լ.
Պետրոսեանները:

**) Տես Ազգ. Հանդ. XIII—XVI գրքեր.

Նոր-Բայազէտի մօտի ս. Յովանէս կոչուած կուապաշտական ուխտանեղու ներքեւ գտնուող երկաթաւալկալեան աղբիւրը ևս առւրը է համարւում: Սա սաստիկ բարակ է և, բնականարար, իսկոյն ծծւում է գետից, սակայն ժողովուրդը բացատրում է, թէ ջուրը ծորակից գետին ընկնելուն պէս՝ «համբառնում է երկինք»: Այս աղբիւրի մօտ ինկով ու մոմով, շաա անգամ էլ աքադաղով ուխտ են գալիս ա). բորսոներն ու կաշու այլ հիւանդութիւններ ունեցողները, որոնք սափորով ածում են այդ ջրից իրենց վրայ, և կամ լողանում այդ աղբիւրի տակ շինուած տւաղանում, ոմանք էլ լոկ խմում են այդ ջրից: բ). Սակաւակաթ կանայք մոմեր վառելով աղբիւրի առջև՝ քսում են այդ ջրից իրենց ստինքներին: գ). Երբ արտերին վասառմ են մկները կամ մորեխները, տանում են այս ջրից և սրսկում արտերի վերայ: դ). Հիւանդ անասուններին ևս թրում այս աղբիւրի ջրից խմացնում են, որ առողջանան: նաև սակաւակաթ կովերի ծծերն այս ջրով լուանում են՝ որ կաթն առատանայ: ե). Շատերն էլ այս ջրից տանում ածում են ինուցու մէջ, որպէսզի աւելի մեծ քանակութեամբ կարագ ստանան: Պատմում են, թէ այս ջրի մէջ թքողը կուրացել է, սրան հայոյողի թրանը ծուուել է:

Նոր-Բայազէտ քաղաքի մէջ յայտնի է Փոստոյի աղբիւրը, (ծծմբային ջուր է), որ այսպէս է կոչում Փոստայենց: տան հանգէտ գանուելու պատճառով: Մրա վրայ նոյն իսկ մի փոքրիկ մատուռ է շինուած: Մրա կատարած հրաշագործութիւններից ուշագրաւ է այն, որ սրանից 10—12 տարի առաջ Քօթէ Դատէի Գէզոյի տղան, որ վեց ամսից ի վեր պապանձուած էր, երբ գալիս է այս աղբիւրի ջրից խմում անմիջապէս լեզուն բացւում է:

Ո՞չ պակաս զօրաւոր է համարւում նաև Փաշաքենտ գիւղի Կանանդիւրի՝ որը մասնաւորապէս օգնում է սակաւակաթ կանանց: Այսպիսի կանայք թխում են ալին (անալի) կլօն (բաղարջ) և երկու մօտ վերցրած գալիս այս աղբիւրը՝ ուխտ: Վառելով մոմերն աղբիւրի առջև, նրանք վեցական պատառ կլօն են ուտում, եօթներորդը գնում աղբիւրի զլախին և եօթական ափ այդ ջրից խմում:

Նշանաւոր է նաև Ֆիւսաճը գիւղից 2 կիլոմետր հեռաւորութեան վրայ գտնուող Եկանանչ աղբիւրը, որը երբ քիւսաճըցիւները ջուր չունենալու պատճառով կամեցան իրենց գիւղը բերել՝ չշնորհնեց և կտրուեց, բայց երբ սրանք յևս կացան իրենց այդ մտադրութիւնից և ոգղջացին ու աղօթեցին, նորից սկսեց բղխել:

Ուխտաւորներ պակաս չեն նաև Դալիզարդաշի մօտ Գափ ձորում գտնուած սուրբ աղբիւրից: